Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի
հուլիսի 14 -ի N 380 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների
ամրակայման և վերականգման աշխատանքներ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր տաճարի որմնանկարների ամրակայման և վերականգման աշխատանքների կատարումը:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի. հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	674,202,990 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր տաճարի որմնանկարների ամրակայման և վերականգման աշխատանքների կատարում, որի գումարը կազմում է 674,202,990 դրամ: Աշխատանքներն իրականացվելու են «Որմնանկարների վերականգման գիտահետազոտական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից (ՀվՀՀ 02607176):
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր տաճարի որմնանկարների ամրակայման և վերականգման աշխատանքների կատարում, որի գումարը կազմում է 674,202,990 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ